կիրառվում այդ վնասումների առաջն առնելու նպատակով և foշը չէր ենթարկվում կանոնավորման և կազմակերպչական կարգավորման։ Այսպես՝ Սրաշեն (Քիլիսաքենդ) և Շիկահող (Շխավուզ) գյուղերի ծերունիները պատմում են[19], որ Զանգելանի և Մինջևանի թուրքերն ամառը բարձրանում էին Խուստուփի արոտավայրերը։ Քoշվoրնէրից ամեն մի խումբ սովորություն ուներ իջևանելու ճամփին մի որոշ տեղ, որը այս դաշտում, որը այն աղբյուրի մոտ։ Սովորաբար թուրքերն ունենում էին գյուղում fիրվանէր (բարեկամներ)։ Անցնելու միջոցին նրանց այգիների պտուղներից և տան հավերից թուրքը օգտվում էր և փոխարենը սարից ուղարկում էր նրանց պանիր, յուղ և այլ կաթնամթերք, ոչխարենն և ոչխարի մորթի և բուրդ։ Այսպիսով մի հայտնի հավասարակշռության մեջ էր դրվում երկու կողմերի հարաբերությունը և գյուղը պաշտպանվում էր foշվoրնէրի անսանձ թալանից և կողոպուտից։ Սակայն պատահում էր և այնպես, որ թուրքերն երկար էին մնում գյուղի հողերում և սար բարձրանալն ուշանում էր, մինչև որ գյուղի սահմաններում կերը վերջանում էր և գյուղի տավարի համար բան չէր մնում։ Աշնանը՝ սարից իջնելիս՝ foշվoրնէրը չէին շտապում իջնել ցածրադիր արոտավայրերը, երկար կանգ էին առնում գյուղի մոտ և իրենց oբանէրը ձգելով հնձած արտերում՝ այստեղ անասունը արածացնում։ Մի տարի, դա 90-ական թվականների վերջերն էր, ձմեռը շուտ էր հասել, ձյունը սարերում շուտ էր եկել և foշվoրնէրը հարկադրված էին սովորական ժամկետից ավելի վաղ իջնելու, երբ հայկական գյուղերում արտերի հունձը դեռ ավարտված չէր։ Հայերից շատերը արագացրին իրենց հունձը, իսկ Շիկահողի բնակիչները որոշեցին զինված կանգնել ճամփաների երկու կողմերում և թույլ չտալ foշվoրնէրին գյուղի մերձակայքում կանգ առնելու։ Այդպես էլ լինում է. խումբ-խումբ հետզհետե հեռանում էին։ Բայց գյուղից բավականին հեռանալուց հետո նրանք մտածում են, որ ապագայումն էլ հայերն արգելք կլինեն իրենց հողերի վրա foշվoրնէրի հոտերի կանգ առնելուն, հավաքվում են և միացած ուժերով հարձակվում շիկահողեցոց վրա։ Տեղի է ունենում զինված ընդհարում։ Թուրքերը ետ են մղվում, բայց արտերի մի մասը վնասված է լինում։ Հայերը դիմում են դատարանին և վնասը՝ մոտ 1500 ռ. պահանջում։ Մեջ են ընկնում միջնորդները, տուգանքը չեն վերցնում, որ թշնամությունը ապագայում չշարունակվի, բայց պայման է դրվում, որ թուրքերը սար բարձրանան ոչ թե գյուղի կամ արտերի միջով, այլ կողմնակի ճանապարհներով և հսկողություն կազմակերպվի foշի բարձրանալու և իջնելու միջոցին։

Այսպիսով, գյուղը ինքն էր հնար որոնում տարբեր ձևի տնտեսություններ վարող երկու ազգությունների փոխհարաբերությունները կարգավորելու համար։ Ցարական կառավարությունը կտրուկ միջոցներ ձեռք չէր առնում նրանց խաղաղ համակեցությանը խանգարող պատճառները վերացնելու։ Ընդհակառակը՝ ցարական կառավարությունն իր դեմ ուղղած հեղափոխական տրամադրությունների զարգացումը կանգնեցնելու և անդրկովկասյան ժողովուրդների մեջ ինքնավարական ձգտումներն արգելակելու նպատակով՝ ամեն կերպ խորացնում և սրում էր այդ տնտեսական բնույթ կրող պատճառները։ Ցարական կառավարությունն օգտագործում էր դրա համար և կրոնական հակադրությունները և այն, որ Զանգեզուրում էլ ծագող կապիտալիստական կարգերը մեծացնում և ամրացնում էին գավառական կյանքի մեջ հայերի գրաված դիր-

---

[19] Մեսրոպ արքեպ. Տեր Մովսիսյանի վկայությամբ։